ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ

ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սարդարապատ համայնքի տարեկան հաշվետվությունը տեղի ունեցավ 2014թ. հունվարի 17-ին գյուղի Մշակույթի տան դահլիճում, մասնակցությամբ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար տիկին Փ. Կարապետյանի և համայնքի 160 բնակիչների:

Համայնքի ղեկավար Բ. Վարդանյանը 2013թ. հաշվետվության մեջ նշեց, որ տարին լավ չէր գյուղատնտեսության և անասնապահության համար: Գարնանը անմիջապես սկսվեց բոստանաբանջարանոցային կուլտուրաների սածիլների ցանքսի և մշակության աշխատանքները: Գյուղում գտնվող մեքենա- տրակտորային մեխանիզմների քանակությունը ապահովում է համայնքի ամբողջ հողատարածքների աշխատանքները սկսած վարի, փխրեցման, սնեցման, բուժման և բերքահավաքի գործերը:

2013թվականի մայիսի 12-ին տեղացած կարկուտը զգալի վնաս հասցրեց մշակաբույսերին:.

Համեմատած մյուս տարիներին 2013թ. վերմշակող և իրացնող ձեռնարկությունները նախապես հաստատված պայմանագրերի ընդունեցին ողջ բերքը և ժամանակին վճարեցին բերքի գումարները ամբողջությամբ:

Առիթից օգտվելով ուզում եմ ազգաբնակչության անունից շնորհակալություն հայտնել «Երևանի կոնյակի գործարանի», «Մուլտի Գրուպ» կոնցերնին, «Գինու , կոնյակի տուն Շահնազարյան » ՍՊԸ-ի, «ՄԱՊ» ընկերության, «ԼԵՎՈՆ» ՍՊԸ-ի և «ՍՊԱՅԿԱ» ընկերությունների աշխատանքային կոլեկտիվներին մեր գյուղացիության կողմից աճեցված բերքը ամբողջովին մթերելու և իրացնելու համար:

Վերը նշված հաջողություններին նպաստեցին ՀՀ կառավարության կողմից հատկացված շուկայական գնից ցածր արժեքով ազոտական պարարտանյութը և դիզելային վառելիքը: 2013թ. Արմավիրի մարզպետարանի միջոցով գյուղ ներկրվեց 195 տոննա սիլիտրա տեսակի ազոտական պարարտանյութեր, մեկ պարկը՝ 6000 ՀՀ դրամ և

53 տոննա դիզելային վառելիք, մեկ լիտրը՝ 350 ՀՀ դրամ, որն էլ ամբողջությամբ բաժանվեց ազգաբնակչությանը:

Տարին բարենպաստ էր ոռոգման ջրի տեսակետից:,, ԱՐԱՔՍ,, ՋՕԸ –ի աշխատակիցների հետ համատեղ գյուղի տարածքում գտնվող ռեզերվային խորքային հորերը աշխատեցնելու, ինչպես նաև ներքին գրաֆիկ և հերթապահություն սահմանելով, առանց լուրջ դժգոհությունների համայնքում հաղթահարվեց ոռոգման ջրի սեզոնը:

2013թ.հագեցած էր նաև քաղաքական միջոցառումով, փետրվարի 18-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Նախագահական ընտրություններ, ազգաբնակչության մասնակցությունը ընտրություններին շատ ակտիվ էր, առանց որևէ խախտումների անցկացվեց մրցակցային և թափանցիկ ընտրություն::

Հաշվետու տարում կատարվել են գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգման աշխատանքներ:

Վերանորոգվել և բացվել են երկու խորքային հորեր և չորս կամուրջներ:

Ապրիլ ամսից աշխատեց գյուղի մանկապարտեզը, ուր հաճախում են ինչպես գյուղի, այնպես էլ հարևան գյուղերի ավելի քան 100 երեխաներ:

Գյուղի դպրոցում գործում է երկու նախակրթական դասարաններ,որի ծրագիրը շահել է համայնքը և ֆինանսավորումը կատարվում է համայնքի բյուջեի կողմից:

Մեծ շուքով նշվեց մայիսի 9-ը, Հայրենական մեծ պատերազմի և Շուշիի ազատագրման մասնակիցներին բաժանվեց խրախուսական գումարներ:

2013թ. գարնան և աշնան զորակոչին հայկական բանակ է զորակոչվել 76 զորակոչիկ:

Հաշվետու տարում համայնքում ծնվել է 72 երեխա:

Անցկացվել է համայնքի ավագանու 13 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի հիմնախնդիրները, կայացվել են դրանց լուծում պահանջող որոշումներ, ինպես նաև տրվել են բնակիչների դիմում-գանգատների պատասխաններ:

Համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվում են բնակիչների ամենօրյա ընդունելություն՝ բազմապիսի հարցերով;

Աշնանը կատարվել է 240 հա աշնանացան ցորենի ցանքս:

Գյուղում նկատվում է խաղողի այգիների նոր տարածքների ավելացման աշխատանքներ, գյուղապետարանի կողմից խրախուսվում

են այդ աշխատանքները և կատարվում են փաստաթղթային աշխատանքները:

Հաշվետու տարում գյուղապետարանի կողմից հավաքագրվեց համայքնի սեփական միջոցները 101 տոկոսով:

Համայնքի բյուջեի հաշվին կազմակերպվելև անցկացվել են տարբեր միջոցառումներ, սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվել են դրամական օգնություններ:

Համայնը հաշվետու տարում չունի դրամական պարտքեր:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Բ.ՎԱՐԴԱՆՅԱՆ